

նոյն մարմարիան քարի վերայ թէպէս սորա կարմանէ՝ զույգ միամտութիւն կործնել, բայց ժամանակ անցնելով՝ մեծ սխալանաց և պայծակ- դութեան խնկարկս առիթ է եղել բազմաց և անհաւատարմութիւն առ սուրբ Աւարդագեան: Այսուամբ այս մասին Հոգևոր Իշխանութիւնը բարեհաճ անօրէնութիւն մի կանէ ուղղել սոյն աններկի վրայմուշքն Յովակիմ՝ եպիսկոպոսի:

Իսկ թէ Խաչի շրջանակն $\frac{9 \cdot 11}{11}$ տասերի նշանակու-

Ք. Գ. Տ.

թիւնը ի՞նչ է, պայտէս կրացապ հմ՝ որ են շորից աւետարանչաց գրոց սկզբնաւորութեանց զխատա- ուերն՝ զոր օրինակ՝ Գիրք Տննդեան Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի Քանցի բազումք յօժարեցան, Ի սկզբանէ էր բանն. և Ք. Գ. Տ. տասերն կնշանակին Քահանայապետ Գրիգոր Տա- թեւացի:

ՍՏԵՓԱՆՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻԹԱՐՆԱՆ.

Ի 21^ն Գեղարքեղէն 1874 - օր

Ի Վան Տաթևաւ.

ՍՈՐԸ ԱՆՊԱՅԻՐ ԲԻԹԱՆՊԵԱՆ.

Հ Ա Յ Ի

Ի ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ ԵՒ Ի ՀՈՒՆԳԱՐԻԱ

ՎԱՅ ԵՒ ԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅ ՄԷՁ.

(Շարունակելու և վերջ)

Հայք, որոնց վրայօք ցարդ խօսեցար և որոնք մասամբ՝ մի և նոյն ժամանակ Հունգարացոց հետ՝ գրեթէ Հունգարացի առաջնորդաց և Ար- բատեան տան թագաւորաց ժամանակ ծաւալե- ցան երկու Հունգարական երկիրներու մէջ, և թէ նոյն պատմական յիշատակութիւնը հանելու ըլ- րանք, որն որ Հունգարական ժամանակագրու- թեանց և Գեոգրամադիտական Հաւարածոյից մէջ նոյնին վրայօք յառաջ կուգայ նաև սեղեաց

անունները որոնք ազգային անունը կը հնչեն, մնացեալներուն մէջ՝ երկու երկրին մէջ ալ ա- ռանց ընկճման մարեցան և կամ ուրիշ ազգաց մէջ ձուլուեցան:

Գարձեալ թէ ինչպիսի ճոխութիւն ունէր վաղ ժամանակ Հայ անունը Հունգարացոց և նոցա Արբատեան — տան թագաւորաց առջև կը վիա- յէ Կրօնօղէմայ Անդրէաս թագաւորին գործքն, որպէս զի արեւելք սոք կոխել կարենար համա- նուն որչին զԱնդրէաս՝ Աւան Հայ թագաւորին գտելը հետ նշանած էր այնպիսի պայմանաւ, որ Հունգարացի թագաւորը Աւանին ժառանգ ըլլայ Անտոքոյ պետութեան զահուն, և մինակ Աւա- նին տարաժամ մահը արգիլեց երկու արքունեաց և երկու ազգաց մէջ տեսակցութեամբ զիտուած ամուսնութեան կարի սերտ կապը — կը գրէ Աւ- տարապոս Սալաի:

Բ.

Արդի Հայք այլ են՝ առաջիններէն միայնացեալ և տարբեր ժամանակուան մէջ և պատճառաւ Հայաստանէն յառաջ եկած և Առտեալի մէջ տարածեալ Գաղթականաց մնացորդները որոնց ծագմանը վրայօք ինչպէս պատմութեան մէջ՝ նոյնպէս Ազգային աւանդութեան մէջ սոցոյգ և առանձին պատմուած թուականներ ունինք՝ քան վերոյիշեալ հնոց վրայօք:

Գիտենք՝ թէ 1672-ին եկան Առտեալ, զիտելք նաև՝ թէ Ասիոյ հայրենեաց որ տեղւոյն և քաղ- քին երբեմն բնակիչք էին, կը ճանչնանք պատ- ճառները որոնք զիրենք իրենց նախնական հոյ- րենիքը թող տալու և նոր հայրենիք փնտտելու շարժեցին: Մնաց այն յիշատակը բազմատեսակ վտանգներուն որոնք երկար ճանապարհին վրայ՝ ալ և ոյլ աշխարհաց և ճանապարհաց և աղ- զաց մէջ զիպեցան, մինչև վերջապէս Առտեալ հաստատուեցան:

Առտեալի Հայք ըստ միաձայն վկայութեան մեր հաւատարիմ պատմական թուականին և աւան-

(1) Պատմութիւն Հունգարաց. Ա Հատ. էջ 502 և 505:

գումեանը՝ Անի քաղաքէն յատաջ եկան, որ մեծն Հայաստանի Արարատայ միջնաշխարհին Շիրակ գաւառին մէջ էր, և Բաղրատունեաց տան Հայ թագաւորաց ժամանակ՝ Հայաստանին մայրաքաղաքն էր:

Արծրունի և Բաղրատունի տոհմաց հզօր նախարարներն Մեծ - Հայաստանին քանի մը մասերը՝ որոնց մէջ իւրեանց նախնական բերդերը և կալուածները կային: Թ-րդ դարուն մէջ Արաբացոց լուծէն ազատեցին և ինքնակախ աշխարհներ հիմնեցին: Այսպէս նոյն ժամանակ կազմուեցաւ Աւաստրականի թագաւորութիւնը Հայաստանի արեւելեան հարաւային կողմը՝ Վան գլխաւոր քաղաքին հետ ընդ իշխանութեամբ Արծրունեաց: Բաղրատունիք ալ հիւսիսային Հայաստանին մէջ՝ Արարատ գաւառին մէջ իրենց թագաւորութիւնը հաստատեցին, որոյ գլխաւոր քաղաքն էր՝ Անի:

Այս վերջին գաւառը որոյ ղեմ Արարացիք, Պարսիկք և Սելճուկ Տաճիկք յաճախ իւրեանց աւաղակութեամբք և նոյնին քանդմանը համար դիմադրած ճգնաճգն պատճառաւ, գրեթէ երկուքուկէս դար կրցաւ ինքզինքը բռնել, ան առն ալ աւելի Յունաց նենգութիւնը քան բարբարոսաց զէնքը իւր կենաց վերջ տուաւ:

Աստանդին Մանուսեոս բարեկամութիւն կեղծելով՝ զՊաղիկ հիւսիսային Հայաստանի թագաւորը 1046-ին նենգութեամբ առ իւր հրաւիրեց և բանտարկեց, իսկ նորա երկիրը լրտեսութեան մէջ կեցած բանակաւ ըտրորովն գրաւեց: Յոյնք նոյն միջոցին շատ աւելի վատ էին՝ և որք այսպիսի նենգաւոր ձախուլ ստացած երկիրը չկարացին պաշտպանել բարբարոսաց աւաղակութեանց ղեմ: Արիստան սելճուկ Տաճկաց թագաւորը 1062-ին ահագին բանակաւ Հայաստան արշաւեց, Յոյնքը հարուածեց և Անին առաւ, ուր սաստիկ արիւնհեղութիւն և ապականութիւն ըրաւ: Նոյնը Տաճիկներէն առին 1072 Արարացիք: Արարացոցմէ 1086 Պարսիկք, Պարսիցմէ 1124 Վրացիք, Վրացիներէն 1126 դարձեալ Պարսիկք, Պարսիցմէն 1174 վերստին գրաւեցին Վրացիք: Հուսկ ուրեմն 1535-ին երևան կլան ճիւղիղ-

խանին Մանկոլ Թաթարաց քաղմութիւ գնդերը, և բովանդակ Հայաստան ոտնակոխ ըրին և աւարեցին: իսկ Անի քաղաքը՝ ուր խառն քաղմութեամբ դիմեցին սոսկալի արիւնհեղութեամբ աւարեցին:

Անի՝ երբ Յունացմէ առնուեցաւ՝ նախնական Ասիոյ ամենամեծ և հարուստ քաղաքներէն մին էր: Եկեղեցեաց թիւը 1001 էր, շէնքերունը հարիւր հազար բնակչացն առ հասարակ մէկ միլիոն կը համարին պատմադիրները: Վինկենտինու Պէլլովացի՝ որ արևելք կը գտնուէր երբ Թաթարք զԱնի քանդեցին և աւերեցին այն քաղաքին վերայօք կգրէ. "In Armenia est civitas nobilis, quae Ani vocatur, udi sunt mille ecclesiae et centum mille familiae, quam Tataři ceperunt in 12 diebus. ,, 1):

Արդ զարմանալի բան չէ՞ որ այսպիսի շքեղ քաղաք մը որուն մէջ բնակիչք իւրեանց լայնածաւալ վաճառականութեամբն Ասիոյ գանձերը ի մի վայր գումարած են, սա առիթ մըցման եղաւ հարուստ աւարաց ցանկացող Յունաց սելճուկ Տաճկաց, Արարացոց, Թաթարաց, և այլն աղգաց: Արտք նոյնին առմանը համար իրարու մէջ կուտեցան նոյնը աւարաւորս քանդելու և բնակիչքը կորուսանելու համար: Ասկէ մարմ է իմանալ դժբախտ քաղաքին վիճակը, որ քիչ ժամանակուան մէջ այնպիսի յախշտակութեանց և քանդիչ պատերազմաց ասպարէզ դարձաւ, որտեք զինքը ի հիմանց կործանեցին, իսկ բնակիչքը վերջին կարօտութեան մէջ ձգեցին: Ինչ որ քաղաքին մէջ մնաց՝ ան ալ 1316-ին երկրաշարժով աւերեցաւ: Բնակիչքը՝ որտեք վայրաց թշնամեաց զէնքերէն մաղապուր եղան կամ ի գերութիւն չվարեցան՝ առհասարակ ջիրուցան եղան:

Գ.

Թրանսկրլանիոյ Հայոց նախնիք 1239-ին՝ կրբ Մանկոլ - Թաթարք զԱնի խաղաւ կործանեցին:

(1) Vincenții Bellovacensis. Hist. C. 95:

իրենց գծրակոյ քաղաքը արիւնհեղու թեան և բոցակիզման մէջ թողուցին և նախնի հայրական երկրէն վերջին հրածեշոր առին: Իրենք ազատող այն ղնդին կը վերաբերէին, որն որ քաղքին հիւսիսային զուրը խորտակելով դէպ ի Հիւսիս ուղղահայեաց էր: Արատասու և Աովկասու կիւճերէն անցան և հիւսիսային Աովկասիս Գաղանի և Աժտերխանի մէջ տեղ Աքսարի շրջակայքը ծառայեցան:

Երկարատև գրեթէ ամբողջ դար մը եղաւ, որ հոս տեղս բնակութիւննին հաստատեցէն յետոյ՝ Հայք այն ազէտայից համոզումը ունեցան թէ աւազակութեամբ և յափշտակութեամբ ապրող Թաթարաց մէջ՝ որոնցմէ սաստիկ շատ բան կը բեցին, ալ նոյներուն մէջ մնալ բողբոլմն անհնարին է: Աւ չկարենալով կեանքերնին և ստացուածքնին արիւնհեղութենէ և յափշտակութենէ հտե ծարաւի բարթարաց դէմ հաստատուն կերպով պաշտպանել, 1330-ին Խրլմ անցան, ուր ճէնովազուց ձեռք՝ որոնք նոյն թերակղզոյն տէ, էին՝ մեծաւ հիւրասիրութեամբ բնգունուեցան: Ենթ պատմիչները այլ և այլ ճամբով Անիէն Խրլմ գաղթող Հայ բնտանեաց թիւը՝ քառասուն հազար կը հաշուեն: որոնք նոյն տեղը ամեն կերպով ժողովրդաբնակ ըրին: Թեթակղզոյն զխաւոր քաղաքը Քաֆան, ուր իրենց ձեռք ամրացեալ առանձին կողմ մ՝ ունէին ժ.Վ. և ժ.Ն. դարուց արեւելեան վաճառականութեան զխաւոր կեդրոն և ճենովայի բնկերհաշտութեան հետու ծառայող ծովային զուրութեան զխաւոր տեղ, և կալուածոց տեղ ըրին: Այսպիսի օրտակար ծառայութեամբ այն սաստիճան ճէնովազուց վտասհալթիւնը իրենց շահեցան, որ ի սկզբան Խրլմի կալուածոց միմակ ծովկերեայ ամրացեալ տեղերը, ետքն ալ նոյն զխաւոր քաղաքն ալ Հայոց գեղերուն պահպանութեամբ յանձնեցին:

Գ.

Հայք Թաթարաց դէմ տակաւին կաշտպանէին իրենք զիրենք և քաղաքը՝ զիշերանց դուրս յարձակող առաջնորդին պատճառաւ՝ հտե թու

զուցած սակաւամիւ ճենովացի պահապան զուրաց հետ՝ զխաւորաբար երբ ծովը անջնէին բաց էր: Սակայն երբ Տաճիկք՝ քաղաքը այս կողմն երեք հարիւր նաւով շրջապատեցին և առ պակասութեան պարենի քաղքին մէջ ժանտախտ յառաջ եկաւ, իրենց բովանդակ յոյսերը ի դրեւ կրան նոյնը պահպանելու համար, զօրութեանց մէջ ալ նուազելով՝ քաղաքը կրգմամբ հաստատուած պայմաններով Տաճիկաց ձեռք յանձնեցին:

Տաճիկք նոյն միջոցին մէջ Թաթարաց հետ միանալով՝ քիչ ժամանակէն երգմնազանց դրտնուելով՝ քաղաքը աւարեցին, իսկ նորա բնակիչքը և անկէ դուրս եղողները սպաննեցին:

Հայք՝ որոնք բնջհանուր յափշտակութեան և սպանութեան մէջ ամենէն աւելի կրեցին, մեծաւ մասամբ ազին անդին ցրուեցան: մնացեալներն ալ փախստեամբ ապաստան մը փնտտեցին: Ազատողները Լեհաստանի քաղաքները Քամէնի, Մոսկովի, Լեմպերի, Սղանիսլաւ և այլն իւրեանց ծոցը բնգունուեցան:

Լեհաստանէն չի դիտցուիր՝ թէ երբ և ինչո՞ւ համար Մոլտաւիա անցան՝ անկէջ ալ վերջապէս 1672-ին Թրանսիլլանիա Իրենց բնակութիւնը վերջին անգամ ալ փոխելուն պատճառը մի և նոյն ժամանակուան թուականութեան յաջորդութեամբը յայնմ կգոնենք, թէ Մոլտաւիոյ դուխք զՀայերը ամեն կերպով իրենց ազգայնութենէ մերկացնել կազէին և Ապաք ազդին մջ ձուլել ճգնեցան, և որովտե նոյնին չուզեցին հաւանիլ՝ սաստիկ հալածումներ կրեցին անոնցմէ, Հալածմունքը սկիզբ առաւ Ստեփաննոս Աղոլտոյի ժամանակ 1551-ին, զոր անկողմնակցութեամբ յառաջ կրերէ Մէննաս սարկաւազը, ժամանակակից և կանանտես զրողը, իւր քսան և հինգ էջ ունեշող ողբերգութեամբ մէ, և վերջացաւ 1668-ին Գուգա Աղոլտոյի ժամանակը:

Նոյն ժամանակ Հայք դառնակակիծ ըլլալով իրենց ամենասուրբ արժանեացը պաշտպանութեան համար, յուսահատած իրենց վերջին հնարքին՝ զէնք ձեռք առին և օգնութիւն գտնելով քսան մը Մոլտաւացի ապստամբաց ձեռք՝ անոնց զրտաւորը Սուլաւայի բերդը խօթեցին ուսկից մի-

նակ յաջորդ 1669 տարին և ան ատենը ալ Տաճկաց օգնականութեամբը կրնար ազատիլ :

Սուչապայէն Տաճկաց ձեռք չպածեալ՝ Հայք թրանսիլվանիոյ ձիւնալեռները անկից ալ Միքայէլ Ա. Արաֆիին զխաւորութեան թողտուութեամբը ձիւնալեռանց ստորտը գտնուած տեղւորները քառուցանուց Սոյն զխաւորը՝ զՀայերը մեծաւ չիւրատիրութեամբը ընդունեցաւ, ներքին անմիտարանութեանց, Տաճկաց և թաթարաց ըրած ապականութեանց համար՝ իւր բնակչաց մէջ նուազած երկիրը ժողովրդաբնակ ընելու և վաճառականութիւնը յառաջ տանելու համար: Այլ և այլ ազատութեամբ՝ արտօնութեամբք վարձարեց զիրենք: Որոնք վերջէն երկու թաղաւորական քաղաքաց, Հայաքաղքին (Սամոշոյվար կամ Աէռլա) և Եղիսարեթուպոլսոյ (Պաշապոլ կամ Էդէշֆարվա) չիմնարկիչ եղան: Հոս յիշեցնել կուզեմ, որ թրանսիլվանիոյ պատմագիրք, Յովսէփ Պէրէտո, Փաշինկ և այլն յայնրմ կմիտարանին մեզի չեա՛ թէ Հայք Անիէն յառաջ եկան, սակայն կհնաւան և կսխալին, որ իրենց գաղութար Հայ թաղաւորաց գահուն բարձմամբը և Անիի կործանմամբը Գանուբեան իշխանութեանց և թրանսիլվանիոյ մէջ անմիջական կերպով կրերն, և երկուքն ալ ժ: ու կէս դարը կը գնեն:

Ա. երկ մանրամասն տեղեկութիւն տալ քաղաքական և եկեղեցական կենաց վրայօք՝ ուրիշ անգամուն կթողում: Երբ Ա. Պօլսոյ Պատկասելի և Սրբազուճար Արմնական ժողովը հանդերձ նորին Բարձրաշնորհ և բարեխնամ Ս. Նախագահին և Գեր. Ատենապետին հետ կարեկից հաշիցուածք մը արձակեն վերոյիշեալ դաւաւաց մէջ ցրուեալ եղբարց վրայ, և նոցա վիճակը նկատողութեան առնեն, զոր լաւ գիտէ Բարձրաշնորհ Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք բարեգործ Հայրը, որուն վրայ նոյն տեղոյն բովանդակ քաղաքացիք իւրեանց ակնկալութիւնը դրած են:

ԱՆՏՈՆ Ծ. Վ. ԹԱՐԴՄԱՆՆԵՆ

Քարտղի ի Խոսողիչդ.

1790.

Հեռեւեալ իրաւացի դիտողութիւն Ա. Պօլիս հրատարակուած 12-ոյ Արմնական ամսագրէն քաղելով կհարդրդեմք ընթերցողաց, և կխոստանամք Աւետարանական ընկերութեան հակաքրիստոնէական արդեանց նկատմամբ մի յօդուած ևս ի պատեհ ժամու գրիլ և հրատարակիլ:

ՊՈՏՊՈՒՄՈՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ Ս. ԿՐԾՆԻ

Ի Թ Ո Ւ Ր Ք Ի Ա.

Աերջին օրերս Աւետարանական Ընկերութեան կողմանէ անգլիացի պատգամաւորութիւն մը Լոնտրայէն հասած էր ի Մայրաքաղաքս՝ անձամբ մեր Ա. Ե. Ս. Պատկասելի Պայտեր ներկայանալու և Թուրքիոյ Քրիստոնէից Արմնի և խղճի ազատութեան նկատմամբ՝ բազմաթիւ ստորագրութիւն կրող Յիշատակագիր մը մատուցանել նորին Օգոստոսփառ Պայտերութեան:

Սոյն պատգամաւորութիւնը անգլիոյ Ասեմ. դեսպանին միջնորդութեամբն անցեալ շարժու Բ. Գուռն գնաց՝ արտաքին գործոց Ասեմափոյլ Պաշտօնեայէն խնդրելու Ա. Ե. Ս. Պայտեր ներկայանալու շնորհն, սակայն Օսմանեան կառավարութիւնն բացարձակ մերժեց այս առաջարկութիւնն թէ մինչ ցարդ շարունակուած սուլտանութեանց և յարաբերութեանց անհամաձայն ըլլալուն և թէ պաշտօնական կերպարանք մը չկրելուն համար:

Մեր այս խնդրոյն մէջ երկու ծանր կէտ կըրը՝ մարնք, մէկը՝ եղած մերժումն՝ որ բնականապէս պատգամաւորութեան ինքնասիրութիւնն վերաւորեց, և մէկ ալ՝ այդ յիշատակագիրն՝ որ դիւանագիտական լիզուաւ յանիրաւի բողոք մ՝ էր Տաճկատանի հայրախնամ Պատավարութեան դէմ:

Յիշատակագիրն կյայտարարէ՝ թէ Թուրքիոյ Քրիստոնէից (մանաւանդ Հայոց) Արմնքն և խղճի ազատութիւնն տառապանաց և հալածանաց են: